

Վկայագրի ստացում

առանց վիզայի անհրաժեշտության պահանջի կարգի՝ Ռուսաստանի Դաշնությունն մուտք գործած օտարերկրյա քաղաքացիների կողմից

Համաձայն 2010թ. մայիսի 19-ի թիվ 86-ՓՅ “2002թ. հուլիսի 25-ի թիվ 115-ՓՅ Դաշնայի օրենքում փոփոխություն մտցնելու մասին” Դաշնային օրենքի, 2010թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած “Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին” օրենքի, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները իրավունք ունեն աշխատանքային պայմանագրի, կամ անձնական, տնային, և այլ նմանատիպ կարիքների աշխատանքների իրականացման (ծառայությունների մատուցման) քաղաքացիա-իրավական պայմանագրի հիման վրա, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ, վարձու աշխատանքային գործունեության մեջ ներգրավվել Ռուսաստանի Դաշնության տարածքում, վկայագրի առկայությամբ, օրինական գտնվող յուրաքանչյուր օտարերկրյա քաղաքացու, որը ժամանել է Ռուսաստանի Դաշնությունն առանց վիզա ստանալու պահանջի կարգի:

Վկայագիր ստանալու համար Ռուսաստանի Դաշնության տարածքում, օրինական, առանց վիզայի անհրաժեշտության պահանջի կարգի մուտք գործած օտարերկրյա քաղաքացին, Դաշնային Միգրացիոն Ծառայության (հետագայում՝ Ռուսաստանի ԴՄԾ) տարածքային մարմնին է ներկայացնում.

- 1) վկայագրի ստացման վերաբերյալ դիմում;
- 2) տվյալ օտարերկրյա քաղաքացու անձը հաստատող և Ռուսաստանի Դաշնության կողմից որպես այդպիսին ծանաչված լինելու փաստաթուղթ;
- 3) միգրացիոն քարտ՝ տվյալ օտարերկրյա քաղաքացու Ռուսաստանի Դաշնությունն մուտք գործելու մասին սահմանապահ հսկողության մարմնի նշումով, կամ ԴՄԾ տարածքային մարմնի կողմից՝ տվյալ օտարերկրյա քաղաքացուն տրված միգրացիոն քարտի նշումով;
- 4) Համաձայն Ռուսաստանի Դաշնության հարկերի և տուրքերի օրենսդրությամբ սահմանված կարգի (հետագայում՝ հարկերի վճարման մասին փաստաթուղթ), ֆինանսական կանխավճարային վճարումների տեսքով, վկայագրի հիման վրա ֆիզիկական անձանց մոտ աշխատանքային գործունեության իրականացմանը նախորդող

ժամանակահատվածի համար կատարված ֆիզիկական անձանց եկամտահարկի վճարումները հաստատող փաստաթուղթ;

5) ֆիզիկական անձանց մոտ այդպիսի օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված աշխատանքային գործունեության տեսակների մասին տեղեկություններ, ներկայացված՝ ըստ Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից հաստատված ձևի:

Առաջին անգամ պատենտ ստանալու համար դիմելիս, այն փաստաթղթերը, որ, համաձայն Ռուսաստանի Դաշնության հարկերի և տուրքերի օրենսդրությամբ սահմանված կարգի, ֆինանսական կանխավճարային վճարումների տեսքով, վկայագրի հիման վրա ֆիզիկական անձանց մոտ աշխատանքային գործունեության իրականացմանը նախորդող ժամանակահատվածի համար կատարված ֆիզիկական անձանց եկամտահարկի վճարումները հաստատող փաստաթուղթ, և, ֆիզիկական անձանց մոտ այդպիսի օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված աշխատանքային գործունեության տեսակների մասին տեղեկություններ, ներկայացված՝ ըստ Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից հաստատված ձևի, չեն ներկայացվում:

Ռուսաստանի ԴՄԾ-ի տարածքային մարմինը, առանց վիզայի անհրաժեշտության պահանջի կարգի՝ Ռուսաստանի Դաշնություն մուտք գործած օտարերկրյա քաղաքացիների կողմից՝ վկայագիր ստանալու համար ներկայացրած դիմումի օրվանից 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ, պարտավոր է տվյալ օտարերկրյա քաղաքացուն տալ արտոնագիր, կամ նրա դիմումի մերժման ծանուցագիր:

Վկայագիրը տրվում է մեկից-երեք ամիս ժամկետով: Վկայագրի ժամկետը կարող է բազմիցս երկարացվել երեք ամսից ոչ ավել ժամկետով:

Այդ դեպքում վկայագրի ընդհանուր ժամկետը, հաշվի առնելով երկարացումները, տրման օրվանից հաշվված, չի կարող գերազանցել տասներկու ամիսը:

Վկայագրի վավերականության ժամկետը համարվում է երկարացված՝ այն ժամանակահատված համար, որի համար մուծված է Ռուսաստանի Դաշնության հարկերի և տուրքերի (հետագայում՝ հարկ) օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն, ֆինանսական կանխավճարային վճարումների տեսքով կատարված ֆիզիկական անձանց եկամտահարկի վճարումը: Այդ դեպքում չի պահանջվում դիմել Ռուսաստանի ԴՄԾ-ի տարածքային մարմիններին:

Այլ դեպքում, վկայագրի վավերականության ժամկետը դադարում է վճարված հարկի ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող օրվանից:

Վկայագրի տրման օրվանից հաշվված տասներկու ամիսը լրանալուց հետո օտարերկրյա քաղաքացին իրավունք ունի դիմել Ռուսաստանի ԴՄԾ-ի տարածքային մարմիններին՝ նոր վկայագիր ստանալու համար:

Վկայագիրը օտարերկրյա քաղաքացուն տրվում է անձամբ, տվյալ օտարերկրյա քաղաքացու անձը հաստատող և Ռուսաստանի Դաշնության կողմից որպես այդպիսին ծանաչված լինելու փաստաթուղթի և, տվյալ ժամանակահատվածի համար հարկի մուծման վերաբերյալ փաստաթուղթի առկայության դեպքում:

Վկայագիրը օտարերկրյա քաղաքացուն իրավունք է տալիս իրականացնել աշխատանքային գործունեություն Ռուսաստանի Դաշնության այն սուբյեկտում, որտեղ այն տրվել է:

Այն դեպքում, երբ չի երկարացվել օտարերկրյա քաղաքացու վկայագրի ժամկետը, կամ նա չի ստացել նոր արտոնագիր, ապա սույն օտարերկրյա քաղաքացին պարտավոր է՝ վկայագրի ժամկետը լրանալու օրվանից տասնհինգ օրվա ընթացքում դուրս գալ Ռուսաստանի Դաշնությունից: Նշված տասնհինգ օրվա ընթացքում օտարերկրյա քաղաքացին համարվում է Ռուսաստանի Դաշնության տարածքում օրինական գտնվող անձ:

Վկայագիր ունեցող օտարերկրյա քաղաքացու կողմից, ֆիզիկական անձի մոտ աշխատանքային գործունեություն չհանդիսացող գործունեության իրականացման համար, տվյալ օտարերկրյա քաղաքացին պարտավոր է ստանալ աշխատանքի թույլտվություն՝ համաձայն թիվ 115-ՓՅ “Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին” Դաշնայի օրենքի: